ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 10, 1959 Общественные науки

Ի. Ա. Աբրաբյան

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՐԻՆԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՅԺՄԵԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նախքան բուն նյութին անցնելը, անհրաժեշտ ենք համարում համառոտակի կանգ առնել օրենսդրության բնագավառում Վ. Ի. Լենինի կատարած հսկայական աշխատանքի մի քանի մոմենտների վրա, որոնք շատ ուսանելի են և այսօր, երբ մշակվում են մեր մի շարք օրենսդրքերի նախագծերը։

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակի օրերին, երբ հիմնադրվեց սովետական կառավարման սիստեմը, սկսեց կենսագործվել սոցիալիստական օրինականությունը, արագությամբ ու հետևողականությամբ լույս տեսան Սովետական իշխանության առաջին դեկրետները։

1917 թ. հոկտեմբերի 26-ին լույս տեսան «Հաշտության մասին» և «Հողի մասին» դեկրետները։ 1917 թ. դեկտեմբերի 14-ի դեկրետով բանկային գործը հայտարարվեց պետական մոնոպոլիա։ Այնուհետև 1918 թ. գարնանից սկսվում է արդյունաբերական օբյեկտների ազգայնացումը, որոնց մասին լույս են տեսնում բազմաթիվ դեկրետներ։

Այդ դեկրետները ռևոլյուցիոն իրավական այն ակտերն էին, որոնց ուժով Սովետական պետությունը էքսպրոպրիացիայի էր ենթարկում էքսպրոպրիատորներին։ Այդ դեկրետներից շատերը կազմել կամ խմբագրել է անձամբ Վ. Ի. Լենինը։

Այնուհետև, պատմական շատ կարճ ժամանակամիջոցում լույս տեսան նաև Սովետական իշխանության հիմնական օրենքը՝ Կոնստիտուցիան և առաջին օրենսգրքերը։

Լենինի կենդանության օրոք խնամքով և բազմակողմանիորեն մշակվեցին և 1922 թ. լույս տեսան Աշխատանքային. Հողային, Քաղաքացիական, Քրեական օրենսգրքերը և Դատարանակազմության մասին կանոնադրությունը։ 1923 թ. լույս տեսան Անտառային օրենսգիրքը, քրեական և քաղաքացիական գատավարական օրենսգրքերը։

Ինչպես հասարակական-քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում, այնպես էլ իրավունքի բնագավառում Վ. Ի. Լենինը ցուցաբերել է խորաթափանց միտք, դրսևորել զարմանալի ձեռներեցություն օրենսդրության գործում։

Վ. Ի. Լենինը ուշադիր հետևում էր Սովետական օրենսդրության զարգացմանը, անձամբ ղեկավարում Արդարադատության ժողովրդական Կոմիսարիատի կողմից օրենսգրքերի նախապատրաստման գործը, անում շատ կարևոր դիտողություններ ու ցուցումներ՝ օրենքները և օրենսգրքերը կազմելու, նրանց ռևոլյուցիոն նպատակասլացությամբ հագեցնելու, շահագործող դասակարգերի դեմ մղվող պայքարում մարտունակ դարձնելու ուղղությամբ։ Այդ բոլորը կարևոր դեր կատարեցին սովետական կարգերի ամրապնդման գործում և շատ

ուսանելի են ու օգտակար օրենսգրքերի վերանայման և նոր օրենսդրության կոդիֆիկացման գործում։

Այսպես, օրինակ, 1922 թ. մայիսին՝ ծանոթանալով ՌՍՖՍՌ-ի Քր. օրենսգրքի նախագծին, Կուրսկուն ուղղված նամակում Վ. Ի. Լենինը առաջարկում էր կոնտրռևոլյուցիոն հանցավոր արարքների պատժաչափը ճշտել։ Ընդ որում նա ինքը տալիս էր կոնտրռևոլյուցիոն հանցագործության հասկացողության բնորոշումը և նշում այդ կարգի հանցագործությունների առանձին տեսակները։ Կոնտրռևոլյուցիոն հանցագործությունների վերաբերյալ Քր. օր. 57, 58, 61 և 70 հոդվածների նախագծերը անձամբ վերամշակվել են Վ. Ի. Լենինի կողմից[1] և հաստատվել Համառուսաստանյան ԿԳԿ 9-րդ գումարման 3-րդ սեսիայի կողմից։ Նույն կարգով Լենինը մեծ դեր է կատարել քաղաքացիական լարդ հարաբերությունների կարգավորման համար օրենսդրության մշակման գործում։

Անհրաժեշտ ենք համարում կանգ առնել ՌՍՖՍՌ քաղաքացիական օրենսգրքի նախագծի առթիվ մեծ Լենինի կողմից արված որոշ դիտողությունների վրա, որոնք նա արել է օրենսգրքի մշակման և գործադրության մեջ դնելու ժամանակ, մանավանդ, որ Սովետահայ իրավաբանական գրականության մեջ դրանք իրենց արտացոլումը չեն գտել։

Օրինագծի մշակման գործը գտնվում էր Վ. Ի. Լենինի անմիջական հսկողության տակ, որի առթիվ նա աշխույժ մտքերի փոխանակություն էր կատարում նրա կազմողների հետ։ Կուրսկուն ուղղած նամակներում Լենինը ստվորեցնում էր՝ թույլ չտալ քաղաքացիական իրավունքի մասին հին բուրժուական հասկացողության ուռճացմանը, այլ ստեղծել նոր քաղաքացիական իրավունք, նոր վերաբերմունք մասնավոր պայմանագրերի նկատմամբ։ Բացի ընդհանուր քաղաքացիական-իրավաբանական դրույթներից ու սկզբունքներից, նա քննարկել ու շտկել է Քաղ. օր-ի կոնկրետ հոդվածների տեղը ու դերը ամբողջ օրենսդրքի սիստեմում։

Ժողկոմխորհի ներկայացրած քաղաքացիական օրենսգրքի նախագծից հանվել էր այն հոդվածը, որն տնտվեր էր ճանաչում ազատ պայմանագրերը, որոնք կնքված էին մասնավոր անձանց միջև՝ ակնհայտնի կերպով տուղված ի վնաս պետության։ Այդ կատարվել էր մի շարք իրավաբանների և տնտեսվարների այն փաստարկմամբ, թե այդ նորման (Քաղ. օր 30) մասնավոր նախաձեռնություն կսեղմի ու իբր տնտեսական շրջանառության վրա կազդի։

Վ. Ի. Լենինն՝ անթույլատրելի համարելով այդ մոտեցումը, իր մի նամակում գրում էր, որ Ժողկոմխորհը քաղաքացիական օրենսգիրքը «կատարելապես անպետքացրել է» և պահանջում էր վերանայել այն ու ներկայացնել քաղբյուրո։ Նա պահանջում էր, որ «սոանց քաղբյուրոյի վերանայման և հաստատման օրենսգրքեր չընդունվեն»[3]։

Նշված պահանջով Վ. Ի. Լենինը նկատի է ունեցել պետական սոցիալիստական սեփականության շահերը, քանի որ թույլ տալ մասնավոր անձանց պայմանագրեր կնքել ի վնաս պետության՝ կնշանակեր համակերպվել այն

---

[1] В. И. Ленин, „О социалистической законности", стр. 698, 1958.
[2] Там же, стр. 673—674. տես նաև Վ. Ի. Լենին, հատոր 36, էջ 653։
[3] Տես Журн. „Большевик", (Ленин — Письмо Молотову), № 2, стр. 62, 1937.

նյութական վնասի հետ, որը նման դեպքում անպայման պետք է կրեր Սովետական պետությունը և նրա տնտեսական հիմքը։

Ահա այդ է պատճառը, որ Լենինը պահանջեց 30-րդ հոդվածը թողնվի քաղ. օրենսգրքի նախագծի մեջ։

Հայտնի է, թե այդ հոդվածը ինչ մեծ նշանակություն ունեցավ Նեպի շրջանում, շահագործող դասակարգերի դեմ մղվող պայքարում։

Վ. Ի. Լենինը ի վիճակի չեղավ օրենսգրքի բոլոր հոդվածները վերանայելու։ Արդժողկոմ Կուրսկուն — «Առանձնապես շտապ և կարևոր» նամակ գրելով, նա նշում էր, որ թեև ամառողջության պատճառով ինքը ի վիճակի չէ քաղաքացիական օրենսգրքի առանձին հոդվածների վերլուծության մեջ խորանալու, այնուամենայնիվ սահմանափակվում է մի շարք կարևոր ցուցումներով։

1) Արդժողկոմը պետք է հետևի, անձամբ հսկի, թե հատկապես ո՞վ է պատասխանատու բաղաքացիական օրենսգրքի յուրաքանչյուր կարևոր բաժնի համար։

2) Անպայման վերցնել այն բոլորը, ինչ արևմտաևրոպական երկրների պրակտիկայի ու փորձի մեջ գոյություն ունի ի պաշտպանություն աշխատավորների։

3) Չսահմանափակվել դրանով (դա ամենագլխավորն է), կուրորեն չհետևել Արդդործժողկոմատին։ Չհաճոյանալ «Եվրոպային»։ Այլ ավելի առաջ գնալ՝ «մասնավոր իրավական հարաբերություններին», քաղաքացիական գործերին պետության միջամտությունն ուժեղացնելու գործում[4]։

Արդժողկոմատի կոլեգիայի անդամի հուշագրի վրա, որտեղ նշված էր, որ բանդյուղտնտեսության հսկողության ենթակա չեն մասնավոր գործողությունները, այսինքն՝ աղատ շուկայի աշխատանքը, Լենինը դիտողություն է անում «դա ճիշտ չէ, որտեղի՞ց՝ այս»[5]։

Այս դիտողություններից այն հետևությունը պետք էր անել, որ պետությունը ակտիվ կերպով պետք է միջամտի ու հսկի աղատ շուկայի և մասնավոր գործարքների վրա։

Վ. Ի. Լենինի այս դիտողությունների հիման վրա վերամշակված օրենսգրքի նախագիծը դրվեց Համառուսաստանյան ԿԴԿ 9-րդ գումարման 3-րդ և 4-րդ սեսիաների քննարկման։ Վերջին սեսիան որոշում ընդունեց Քաղաքացիական օրենսգիրքը գործադրության մեջ դնելու մասին։

Վ. Ի. Լենինը նշում էր, որ Քաղաքացիական օրենսգիրքը ընդունելիս՝ Սովետական պետությունը հաշվի է առել ժամանակի բոլոր նրբություններն ու առանձնահատկությունները, և որ օրենքով նախատեսված սահմանափակումները ուղղված են ուրիշի աշխատանքի շահագործման ու Նեպի չարաշահումների դեմ։

Նեպ-ի ժամանակաշրջանում ընդունված քաղաքացիական և մյուս օրենսդրքերը արդեն հնացել են։ Քաղ. օրենսգրքի նորմաներն իրենց հիմնական մասերով նկատի են ունեցել կարգավորելու այն գույքային հարաբերությունները, որոնք գոյություն ունեին Նեպի շրջանում և ամրապնդում էին սոցիալիս-

---

[4] Վ. Ի. Լենին, Երկեր, 33 հատոր, էջ 232—233։

[5] „Ленинский сборник", т. XXXV, стр. 328.

տական էկոնոմիկան։ Այդ օրենսգրքում դեռևս պահպանվել են այնպիսի նորմաներ, որոնք Նեպի ժամանակ կարգավորում էին մասնավոր տնտեսության, արդյունաբերության, առևտրի և գյուղատնտեսության բնագավառում եղած մասնավոր սեփականատիրական և նույնիսկ կապիտալիստական վարձու աշխատանքային, գույքային հարաբերությունները, որոնք վաղուց դադարել են գոյություն ունենալուց։ Հետևաբար այդ հարաբերությունները կարգավորող նորմաները նույնպես փաստորեն դադարել են գործելուց։

Դրա հետ միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ սոցիալիստական էկոնոմիկայի զարգացումը տվել է նոր որակ։ Այդ որակը հենց անձնական սեփականության լիակատար դրսևորումն է, որը բացառապես բանվոր ծառայողների ու կոլտնտեսականների աշխատանքի արդյունքն է և բացառում է ուրիշի աշխատանքի շահագործումը։ Անձնական սեփականության այս ձևը ծառայում է քաղաքացիների սպառողական կարիքների (պահանջմունքների) բավարարմանը իր այդ բնույթով։ Այն սկզբունքորեն տարբերվում է մասնավոր կապիտալիստական սեփականությունից։ Անձնական սեփականությունը սոցիալիստական սեփականության բազայի վրա ձեռք է բերել նոր տենդենց, աշխատավորների նյութական, կուլտուրական պահանջմունքների առավելագույն բավարարման տենդենց։ Այդ նշանակում է, որ Քաղաքացիական և Աշխատանքային օրենսգրքերը հիմնովին պետք է վերափոխվեն։ Նրանք արդեն պետք է ծառայեն կոմունիզմի կառուցման պահանջներին, կանոնավորեն աշխատանքային և գույքային, ինչպես նաև դրանց հետ կապված ոչ գույքային հարաբերությունները, որոնք ծագում են պետական կազմակերպությունների, կոլտնտեսային և այլ կոոպերատիվ, ինչպես նաև մյուս հասարակական կազմակերպությունների ու քաղաքացիների միջև։ Օրենսգրքերի նպատակը պետք է լինի ամրապնդել ու զարգացնել սոցիալիստական տնտեսության սիստեմը և համաժողովրդական սեփականությունը, սոցիալիստական արտադրության հզոր աճը և աշխատավորների նյութական ու կուլտուրական պահանջների առավել բավարարումը. խնդիրներ, որոնք նախատեսել է պարտիայի 21-րդ համագումարը։

*

Վ. Ի. Լենինը նշում էր, որ «Մեր օրենսդրության արագության նմանը ուրիշ տերություններ, գժրախտաբար չգիտեն»[6]։

Այժմ մենք կարող ենք ասել, որ ոչ միայն ուրիշ տերություններ, այլ նույնիսկ մեր երկիրը՝ հանճարեղ Լենինի մահից հետո, օրենսդրության ու կոդիֆիկացման նման մասշտաբի տրիումֆալ զարգացում չունեցավ։ Դա պետք է բացատրել նրանով, որ սովետական հասարակարգը համեմատած նախորդ հասարակարգերի հետ, ուներ, միանգամայն հակադիր բնույթ ու նպատակներ, քաղաքական ու տնտեսական կյանքի բոլոր բնագավառներում պետք է ընդուներ իրավական նոր ակտեր ու օրենքներ, որոնք կարգավորեին սոցիալիստական հասարակարգի իրավահարաբերությունները։ Կյանքի կոչվեցին ռևոլյուցիոն ժողովրդի կամքն արտահայտող օրենքներ, որոնք հասարակական կյանքի զարգացմանը զուգընթաց պետք է վերափոխվեին։ Բայց այդ վերափոխումները վերջին շրջանում՝ դանդաղ էին տեղի ունենում, հատկապես՝ անձի պաշտպանու-

---

[6] Վ. Ի. Լենին, 33 հ., էջ 466։

քի պայմաններում և միշտ չէ, որ համապատասխանում էին մեր հասարակարգի առաջընթացին, իսկ որոշ դեպքերում էլ նույնիսկ արգելակում էին այդ առաջընթացը։

Այսպես, օրինակ՝ «Պետական ու հանրային գույքի հափշտակության համար քր. պատասխանատվության մասին» 1947 թ. հունիսի 4-ի ՍՍՌՄ Գերագույն Սովետի նախագահության հրամանագրով նախատեսված է խիստ պատիժ՝ 7 տարուց ոչ պակաս ազատազրկում, եթե հափշտակությունը կատարվել է պետական օբյեկտից։ Քանի որ հրամանագիրը ուրիշ ավելի ցածր պատժաչափ չի նախատեսում, այդ պատճառով էլ պրակտիկայում պատահում էին դեպքեր, երբ 10 հազար ռուբլու հափշտակման և 50 կգ խաղողի հափշտակման համար սահմանվում էր միևնույն պատիժը։ Դրա հետևանքը լինում էր այն, որ կատարված հանցանքի և նրա համար նշանակված պատժի միջև նկատվում էր խոշոր անհամաչափություն։ Այդ հանգամանքը իր հերթին նսեմացնում էր սովետական օրենքի հարկադրաղաստիարակչական դերը։

Հասկանալի է, թե ինչու այս հրամանագիրը և նրա կիրառման պրակտիկան ենթարկվեցին արդարացի քննադատության[7], թեև այդ հրամանագիրը առ այսօր չի վերացվել, բայց և այնպես 1955 թ. հունվարի 10-ի «պետական և հանրային գույքի մանր հափշտակման համար քր. պատասխանատվության մասին» հրամանագրով արդեն ենթարկվել է բարեփոխության։ Մեր գործող օրենսգրքերը, ինչպես օրինակ՝ Բնակարանային, Աշխատանքային, Քրեական օրենսգրքերը այնքան են լրացվել առանձին որոշումներով ու հրամանագրերով, որ առանց նրանց սիստեմատիզացիայի ու կոդիֆիկացման, խիստ դժվար է լինում նրանցից օգտվել։ Բացի այդ, այդ հանգամանքը երբեմն էլ տեղիք է տալիս իրավաբանական անճշտությունների։

Վ. Ի. Լենինը դեռ 1922 թ. փետրվարի 15-ին Արդժոդկոմ Դ. Ի. Կուրսկուն գրել է.

«Եթե մեր օրենքները «հակասական են» (որում կասկած չկա), ապա ինչի համար են Արդժկ-ն և օրենսդրական նախագծերի բաժինը, ի՞նչ է արվում կոդիֆիկացիայի համար, ինչ՝ հակասությունների վերացման համար»[8]։

Մեկ ուրիշ գրամակում, 1922 թ. սեպտեմբերի 25-ին, Վ. Ի. Լենինը նորից հարցնում է՝ «Ի՞նչ է արվում Զեկ մոտ Սովետական իշխանության օրենքների ժողովածուն լույս ընծայելու համար։

Քնած է արդյո՞ք կոդիֆիկացման բաժինը, թե՞ ինչ որ բան է պատրաստում 5-ամյա հոբելյանին. պետք է արթնացնել նրանց...»[9]։

Կարծես թե մեր օրերումն են արված Լենինի այդ դիտողությունները։

Վերջին շրջանում թեև որոշ աշխատանք կատարված է օրենսդրության կոդիֆիկացման ուղղությամբ, բայց այն դեռ շատ հեռու է լենինյան պահանջներից։

Մոռացության էին տրված լենինյան այն դրույթները, որ օրենսդրական ակտերը պետք է հրապարակվեն պարզ, աշխատավորական լայն մասսաների համար մատչելի և դյուրըմբռնելի ձևով, օրենքները չպետք է ծանրաբեռնել

---

[7] „Укрепление социалистической законности и юридическая наука", жур. „Коммунист", № 11, стр. 19, 1956.

[8] „Ленинский сборник", том XXXV, стр. 325.

[9] Там же, стр. 352.

ավելորդ մանրամասնություններով[10]։ Նոր օրենսդրքերի նախագիծ կազմելիս պետք է նկատի առնել չափազանց կարևոր այս հանգամանքները։

Մեր օրենսդրության հետագա զարգացման համար ոչ միայն անհրաժեշտ է, որպեսզի մինչև վերջ վերացվեն օրինականության խախտումները, այլև թույլ չտալ, որ դրանք հետագայում տեղի ունենան։ Այդ տեսակետից հարկ ենք համարում նշել, որ սոցիալիստական իրավագիտության մեջ տեղ էր գտել Ա. Յա. Վիշինսկու այն թեզը, որ դատարանը մեղադրյալի հանցանքը կարող է ապացուցված ճանաչել «մաքսիմալ հավանականության» հիմունքով, դրանով հնարավոր էր դառնում առանց օբյեկտիվ ճշմարտության լիակատար հիմնավորման մեղադրյալին դատապարտելը։ Ա. Յ. Վիշինսկին մեղադրյալի խոստովանությունը բավական էր համարում կոնտրոլյուցիոն հանցագործությունների ապացուցման և մեղադրյալի դատապարտման համար։ Այդ տեսակետի գործադրումը պրակտիկայում մեծ վնաս պատճառեց մեր հասարակությանը։ Այդ դրույթները իրավացիորեն քննադատվեցին պարտիական-իրավաբանական մամուլում։

Պարտիայի Կենտրոնական Կոմիտեի 1956 թ. հունիսի 30-ի «Անհատի պաշտամունքի և նրա հետևանքների վերացման մասին» որոշման մեջ նշվեց, որ անհատի պաշտամունքի տարածումը հանգեցրել է սոցիալիստական օրինականության կոպիտ խախտումների։ Իսկ այդ օրինախախտումները իրենց հերթին արգելակում էին սովետական օրենսդրության զարգացումը և նսեմացնում նրա դերը։ Պարտիայի Կենտկոմը միջոցներ ձեռնարկեց անհատի պաշտամունքի հետևանքով առաջացած դրությունը վերացնելու, լենինյան օրինականությունը վերականգնելու համար։ Այդ հնարավոր դարձավ այն ժամանակ, երբ Անվտանգության մինիստրության օրգանների նախկին աշխատողների կողմից անցյալում թույլ տրված սովետական օրինականության խախտումները, իշխանության դիրքի չարաշահումները և այլ այլանդակ երևույթները ՍՄԿՊ-ի ԿԿ-ի կողմից բացահայտվեցին և վերջնականապես լիկվիդացվեցին։ Ավարտված է նաև Բերիայի ու նրա համախոհների վնասարարական աշխատանքի հետևանքով անհիմն դատապարտվածների պատվափրկումը (реабилитация), երաշխիք է ստեղծված՝ օրինականության հանցավոր խախտումները չկրկնվելու։ Դրա համար վերացված են ամեն տեսակի արտադատական ռեպրեսիաները և այժմ մենք նույնիսկ քաղաքական հանցագործության համար, ինչպես ընկ. Ն. Ս. Խրուշչովը հայտարարեց ՍՄԿՊ-ի 21-րդ համագումարում,— դատական պատասխանատվության ենթարկելու փաստեր չունենք[11]։

* *

ՍՄԿՊ-ի 20-րդ համագումարի որոշումների լույսի տակ 1958 թ. դեկտեմբերի 25-ին ՍՍՌՄ Գերագույն Սովետի հինգերորդ գումարման երկրորդ սեսիան ընդունեց ՍՍՌՄ միութենական և ավտոնոմ ռեսպուբլիկաների դատարանակազմության, քրեական օրենսդրության հիմունքների, պետական, ինվորական հանցագործությունների մասին օրենքները։ Դատարանակազմության օրենքով ընդլայնված է ռեսպուբլիկաների դատական օրգանների իրավասությունները։

[10] „Ленинский сборник", том. 35, стр. 188, 325.

[11] Ն. Ս. Խրուշչով, «ՍՍՌՄ ժող. տնտեսության զարգացման 1959—65 թթ. կոնտրոլ թվերի մասին» զեկուցում ՍՄԿՊ 21-րդ համագումարում, էջ 146, 1959։

Պետական հանցագործությունների մասին օրենքը պետք է միութենական բոլոր ռեսպուբլիկաների քր. օրենսդրքերի բաղկացուցիչ մասը կազմի։ Երբ համեմատելով ուսումնասիրում ենք այդ օրենքը, մենք տեսնում ենք, որ այն նույնպես ամբողջությամբ ներծծված է վ. Ի. Լենինի կողմից՝ կոնտրռևոլյուցիոն հանցագործությունների մասին տրված ցնութազրող դրույթներով։ Պատժի սուր ծայրը ուղղված է հայրենիքի դավաճանների, լրտեսների, ռեհորիստների, դիվերսանտների դեմ, որոնց համար օրենքով նախատեսված է նաև պատժի առավելագույն միջոցը՝ գնդակահարություն։ Նոր օրենքի ներկա ժամանակաշրջանի գործադրման առանձնահատկությունը այն է, որ պետական հանցագործությունը կատարող սուբյեկտների կազմը փոխվել է, դրանք հանդիսանում են բացարձակապես իմպերիալիստական հետախուզության գործակալներ։

Քրեական օրենսդրության հիմունքները սովետական օրենսդրության դաստիարակչական դերը բարձրացնում է մի նոր աստիճանի։ Ինչպես հայտնի է, դատական որոշ ֆունկցիաներ դրված են հասարակական-պրոֆմիութենական կազմակերպությունների վրա։ Հատկապես մեծահոգություն է ցուցաբերված անչափահաս հանցագործների նկատմամբ, նրանց ընձեռնելով դաստիարակման լիակատար հնարավորություն։ Եթե անցյալում քրեական պատասխանատվություն էր նախատեսվում 12 տարին լրացած անձանց նկատմամբ, ապա քրեական նոր օրենսդրության հիմունքներով այն տարածվում է միայն 14 տարին լրացած անձանց վրա, այն էլ որոշ կարգի վտանգավոր հանցագործությունների համար, իսկ մնացած դեպքերում՝ 16 տարին լրացած անձանց նկատմամբ։ Ընդ որում դատարանին թույլատրվում է կիրառելու դաստիարակչական բնույթի հարկադրական միջոցներ, որոնք քրեական պատիժ չեն համարվում (10, 12, 14 հ. հ.), իսկ սահմանված ազատազրկման պատժաչափը 10 տարուց ավելի կարող լինել։ Եթե չափահաս քաղաքացիների նկատմամբ անցյալում նախատեսված էր պատժի մաքսիմում չափը՝ 25 տարի ազատազրկում, ապա Քր. օր. հիմունքների համաձայն այն նախատեսված է 15 տարուց ոչ ավել։

Արգելվեց անալոգիայի միջոցով (Քր. օր 16 հ.) անձի միայն սոցիալիստական վտանգավորությունը հաշվի առնելով, նրան դատապարտելը։ Նոր հիմունքները նախատեսնում են մարդուն դատապարտել նրա կատարած կոնկրետ մեղքի համար, ըստ որում մեղադրյալը չէ, որ պետք է ապացուցի իր անմեղությունը, այլ այդ, ինչպես և հանցանքը ապացուցելը մտնում է քննիչի, դատախազի և դատարանի պարտականության մեջ։

Նոր ընդունած օրենքներով ընդլայնված է նաև անձի պաշտպանությունը։ Դեռ քաղաքացիական պատերազմի ժամանակ, դասակարգային թշնամու դիմադրության ծանր պայմաններում, պաշտպաններին թույլ էր տրվում ոչ միայն դատարաններում, այլև նախաքննությանը մասնակցել[12]։

Այն ժամանակ համապատասխան թվով իրավաբանական կադրեր չունեինք։ Այժմ մենք այդ ունենք և նախաքննության ժամանակ դատապաշտպանների մասնակցությունը մեծ օգուտ կբերի սոցիալիստական օրինականության առավել ամրապնդման և դեմոկրատական սկզբունքների ընդլայնման համար։ Բայց դրա հետ միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ անցյալում նկատվում էին դեպքեր, երբ դատապաշտպանը՝ մարդասպանության գործով մասնակցե-

[12] Տես Р. Рахунов „Советское правосудие и его роль в укреплении законности", жур. „Коммунист", № 7, стр. 52, 1957.

լով դատական նիստին, հակառակ փաստերին, իր հարցաքննումներով ու պաշտպանողական ճառով փորձում էր երևույթները դատարանին այնպես ներկայացնել, որպեսզի տպացուցեր, թե մարդասպանը մարդասպան չէ։ Քիչ չեն եղել դեպքեր, երբ որոշ դատապաշտպաններ խոսքիգանին, գողին ու ավազակին իրենց ճառերում ներկայացրել են որպես անմեղ արարածներ։ Նման «պաշտպանությունը արդարացի կերպով միայն վայրույթ էր առաջացնում։ Նման «պաշտպանությունը» վտանգավոր է մեր հասարակության համար։ Այդ պրակտիկան նույնիսկ այժմ որոշ իրավաբաններ աշխատում են բացատրել ամբաստանյալի պաշտպանության գաղտնապահությամբ և դատապաշտպանի «էթիկայով», որ փրր թե, եթե ամբաստանյալը իր կատարած հանցանքը հանձն չի առնում, ապա դատապաշտպանը նույնպես իր պաշտպանության ընթացքում պետք է կանգնած լինի այդ դիրքերում։ Այդ ձևի պաշտպանությունը օրյեկտիվորեն նույնանում է բուրժուական դատապաշտպանության հետ և ոչ մի ընդհանուր բան չունի սովետական դատապաշտպանների առաջ դրված խնդիրների հետ, որոնք կոչված են օգնելու դատարանին՝ բացահայտելու ճշմարտությունը և պրոպագանդելու կոմունիստական բարոյականություն։ Դատապաշտպանների մասնակցության թույլատրումը նախաքննության աստիճանից պետք է հետապնդի այն նպատակը, որ բոլոր միջոցներն ու եղանակներն օգտագործվի՝ պարզելու համար մեղադրյալին արդարացնող կամ նրա պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ և մեղադրյալին ցույց տրվի անհրաժեշտ իրավաբանական օգնություն։ Եթե այդ բոլորը կատարվում է ազնիվ դիրքերից, ապա այն դառնում է նաև օգնություն Քննիչին՝ արդարությունը պարզելու համար։ Հետաքրքիրն այն է, որ օրենսդիրը աշխատանքային հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին թույլ է տալիս դատարանի որոշմամբ մասնակցելու ինչպես մեղադրելու, այնպես էլ պաշտպանելու համար։

Քր. օրենսդրության հիմունքները նպատակ են հետապնդում ոչ վտանգավոր հանցագործությունների նկատմամբ պատժաչափերը նվազեցնելու, կամ սահմանափակելու. իսկ առավել վտանգավոր հանցագործությունների նկատմամբ, որոնք ուղղված են պետության, անձի կյանքի ու առողջության դեմ, խստացնելու, թողնելով, որ հանցագործը պատիժը կրի լրիվ՝ օրը-օրի հաշվով։

Ըստ նոր Քր. օրենսդրության հիմունքների, դատարանը կարող է հաշվի առնել դատապարտյալի անձնականությունը և գործի հանգամանքները, պայմանական դատապարտության մասին հասարակական կազմակերպությունների կամ մեղադրյալի աշխատանքի վայրի բանվոր ծառայողների և կոլտնտեսականների կոլեկտիվի միջնորդությունը և մեղադրյալին ենթարկելու պայմանական դատապարտության՝ պարտականություն դնելով միջնորդող կոլեկտիվի վրա՝ վերադաստիարակելու և ուղղելու պայմանական դատապարտվածին։

ՍՍՌՄ գրողների 3-րդ համագումարում ընկ. Ն. Ս. Խրուշչովը իր ելույթում ցույց տվեց, որ այժմ ավելի շատ պետք է մտածել հանցագործություն ծնող պատճառները կանխելու, կյանքի ուղուց շեղված մարդկանց դեպի ազնիվ աշխատանք մղելու մասին[13]։ Այդ շատ կարևոր և մեծ գործ է կոմունիստական հասարակարգի կառուցման համար։

---

[13] «Երևան» 24-ը մայիսի 1959։

ՍՄԿՊ-ի 21-րդ համագումարը դրեց նաև այն հարցը, որ պետական շատ ֆունկցիաներ աստիճանաբար պետք է հանձնվեն ոչ պետական, հասարակական կազմակերպություններին։ Վերը նշած օրինակը այդ անցման եղանակի իրականացման լավագույն արտահայտություններից մեկն է։ Պարտիայի կողմից արդեն ձեռնարկված է միջոցառումներ՝ հասարակական կարգ ու կանոնի պահպանումը, սոցիալիստական համակեցության կանոնների խախտման դեմ մղվող պայքարը ժողովրդական միլիցիայի դրուժինաներին և ընկերական դատարաններին անցնելու ուղղությամբ։ Այս ամենը ասում են այն մասին, որ քրեական օրենսգրքի նախագիծը մշակելիս, որոշ ոչ վտանգավոր արարքներ, որոնք անցյալում դիտվել են որպես հանցագործություն ու դրանց համար պատիժ է սահմանվել, այնուհետև չպետք է տեղ գտնեն։ Նման արարք կատարող անձանց կարելի է ենթարկել հասարակական ներգործության, կամ վարչական տուժի։

ՀՍՍՌ Քր. օրենսգրքի նախագիծը, որը այժմ դրված է քննարկման, դժբախտաբար այդ բանը զգացնել չի տվել, իսկ երբեմն էլ թերագնահատվել է հասարակական կազմակերպությունների աշխատանքային կոլեկտիվների կուլտուրադաստիարակչական դերը։ Բացի այդ նախատեսվել են այնպիսի արարքներ ու ճանաչվել պատժելի, որոնք նախորդ քր. օր-ի մեջ գոյություն չունեն։

Օրինակ. 163-րդ հոդված՝ ինքնագլուխ խոտ հնձելու համար, 170-րդ հոդ. ծկնային պաշարի պահպանության կանոնների խախտման համար, 171-րդ հոդ՝. ապօրինի որսի համար, 238-րդ հոդ. գերեզմանն անարգանքի ենթարկելը, (211-րդ հոդ՝. ապօրինի շինարարության համար), 213-րդ հոդ՝. քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում ամուսնությունը չգրանցելու համար և այլ հոդվածներ։ Կարծում ենք, որ ՍՄԿՊ 21-րդ համագումարի որոշումների լույսի տակ բարեփոխության կենթարկվի քր. օր. նախագիծը։

Ընկ. Ն. Ս. Խրուշչովը համագումարում պարտիայի անունից նշեց սոցիալիստական օրենսդրության և օրինականության զարգացման ուղին։ Նա ասաց.— «Ավելի ու ավելի մեծ չափով պետք է հասարակական կազմակերպությունների տնօրինությանը անցնեն նաև հասարակական կարգ ու կանոնի և սոցիալիստական համակեցության կանոնների ապահովման հարցերը»[14], ինչպես տեսնում ենք սոցիալիզմից կոմունիստական հասարակարգի անցման պայմաններում օրենսդրական ներգործող հարկադրանքի սֆերան ավելի ու ավելի է նեղանում։ Պատժիչ միջոցների սուր ծայրը հիմնականում ուղղված է իմպերիալիստական հետախուզության, նրանց վարձկանների, մարդասպանների, գողերի, չարամիտ խուլիգանների և այլ վտանգավոր հասարակական էլեմենտների դեմ։

* * *

Սովետական իրավաբանների և պետական գործիչների առաջ ծառացել են պատվավոր ու լուրջ խնդիրներ։ Անհրաժեշտ է մեծ եռանդ դրսևորել օրենսգրքերի նախագծերի մշակման ու քննարկման գործում։

Այդ գործում պետք է օգտագործել Սովետական պետության դատարանների, դատախազության անցյալում կուտակած երկարամյա փորձը և ամենօրյա հարուստ պրակտիկան։ Անհրաժեշտ է հաշվի առնել նաև եղբայրական ռես-

[14] Ն. Ս. Խրուշչով. «ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թթ. կոնտրոլ թվերի մասին», էջ 146. 1959։

պուբլիկաների փորձի փոխանակումը, որը կհեշտացնի օրենսգրքերի մշակման գործը։

Այժմ սովետական նոր օրենքների նախագծերի մշակման և օրենսգրքերի կոդիֆիկացման համար ստեղծված են լայն հնարավորություններ։ Շատ միութենական ռեսպուբլիկաներում, այդ թվում նաև Հայաստանում, Մինիստրների Սովետներին կից կազմված են իրավաբանական հանձնաժողովներ, որոնք կոչված են զբաղվելու օրենսգրքերի նախագծերի մշակման նախապատրաստման գործով։

Օրենսգրքերի մշակման ժամանակ պետք է նշանաբան ընդունել Լենինի այն դրույթը, որ «օրենքներ սահմանելիս գործը պիտի կատարել եռակի շրջահայացողությամբ։ Յոթ անգամ չափիր... Անձամբ ստուգեցեք երկու անգամ և երեք անգամ և բազմաթիվ անգամ»[13]։ Պետք է ամենալուրջ վերաբերմունք դույց տալ, ցուցաբերելով զգուշություն, թույլ չտալով շտապողականություն օրենսդրության գործում։

Ժամանակն է վերջ տալ հին օրենսգրքերը «կարկատելով» յոլա գնալու պրակտիկային։

Հաշվի առնելով այս ամենը և մեծ Լենինի դրույթները, ՍՄԿՊ-ի 21-րդ համագումարի պատմական դիրեկտիվների լույսի տակ՝ իրավաբանական հանձնաժողովները կարող են տալ կոմունիստական հասարակարգ կառուցող ժամանակաշրջանին վայել օրենքների նախագծեր, որոնք մինչև նրանց ընդունելը կարելի է դուրս բերել իրավաբանական նեղ շրջանակից և մեր կարծիքով, դնել համաժողովրդական քննարկման։ Լավ կլիներ այդ նախագծերի մասին նախ ստանալ պարտիական, կոմերիտական, պրոֆմիութենական, աշխատանքային կոլեկտիվների, հասարակական այլ կազմակերպությունների, սովետական մարդկանց դիտողությունները ու օգտակար առաջարկները և ապա նոր օրենսգրքի նախագիծը դնել ռեսպուբլիկայի Գերագույն Սովետի սեսիայի քննարկմանն ու հաստատմանը։

Եթե ամբողջ օրենսգրքերի նման քննարկումը կարող է դժվարություն առաջացնել, ապա կարելի է նրա առանձին բաժինները կամ հոդվածները ըստ նպատակահարմարության, հանձնել տարբեր կոլեկտիվների քննարկման։ Օրինակ՝ մեր կարծիքով անձի դեմ (կյանքի, առողջության) ուղղված հանցագործությունների վերաբերող բաժինը կարելի է քննության դնել բժշկական ու հարակից այլ կոլեկտիվներում, քաղաքական և աշխատանքային իրավունքների դեմ ուղղված հանցագործությունների բաժինը՝ պարտիական պրոֆմիութենական և այլ կազմակերպությունների, տեխնիկայի անվտանգության կանոնների խախտման վերաբերյալ հոդվածները՝ արդյունաբերական ձեռնարկությունների կոլեկտիվներին քննարկման և այլն։ Իհարկե, մենք պետք է կրկին հիշատակենք, որ լավ կլիներ, որպեսզի կարևոր բաժինները քննարկվեին բոլոր կոլեկտիվներում։ Այս հանանպարհով լայն աշխատավորական մասսաները մասնակից կդառնան օրենսգրքերի քննարկման և ընդունման գործին։ Այդ կարգով ընդունված օրենսգրքերը, արտահայտելով ամբողջ ժողովրդի կամքը, կդառնան սրբություն բոլորի համար։

[13] „Ленинский сборник", том. XXXV, стр. 327.